մէջ կը յիշուի Ղուկաս եպս. Պարոնտէր, իբր ստացող նոյն գիրքին. «ձեռքս փոթի և հող դառնայ. գիրս առ ձեզ յիշատակ մնայ. և ով որ յիշէ և ողորմի ասէ Տէր Քս զիւրց մեղքն ջնջէ, և իմ մեղօք լցեալ, հոգի միտքս ցնորէ աշխարհի. զձեզ աղաչեմ գիրս հանդիպողի. ասէք թէ Աստ ողորմեսցի. մանաւանդ անիմաստ, տխուր, և լցեալ չարութեամբ Յոհան դպիրս կամենցոյ նոտրող սորա աղաչեմ յիշեցէք ի տէր, վասն երկրորդ հատորիս, ևս առաւել ստացողի Սուրբ գիրքս Տէր հոգևոր Ղուկաս եպսն Սուրբ երուսաղիմայ նուիրակն յիշեցէք աղօթիւ ձեր արժանեաց, զի այս տարին էր ինչեալ ի նուիրակութեան սբ Երուսաղիմայ համար և ետ գրել փափաքանօք և հալալ արդեանցն յիշատակ իւր և ծնողաց իւրոց ամէն։ Գրեցաւ թվին ՌԿԸ (=1619) աւելի Յունիս ամսոյն ԺԵ»։

Նոյն ձեռագիրին ուրիշ մէկ յիշատակարանին մէջ եւս կը յիշուի Ղուկաս եպս. Պարոնտէր հետևեալ կերպով. «...կատարեցաւ գիրքս գովելի, որ չարադրեալ է Պորփիւրի, զի ցանկացող եղև սրմի նուիրակն երուսաղէմի. որ և անուամբն որջորջի Ղուկաս անուն Պարոնտէրի, որ յայսմ ամի եկն ի Լեհի. տեսող եղև այս սուրբ տաղի. ի մեկնութեանցն Յովհաննի. արի և սուրբ եռամեծի. և աշակերտին իւր Գրիգորի. ի բնաբանիցն Պորփիւրի. ի թուականիս ... հազար վաթսուն և ութ աւելի (=1619) Սեպտեմբերի քսան և ութի, որ է աւրն երեքշաբթի, ի Կամենից ամուր քաղաքի...» (Լոյս, 1905. էջ 776-778)։ 1616 թուականով (ՄՁ. Թ. 242) ձեռագիր Ատենի սաղմոսին մէջ կը գտնուի Ղուկաս եպս. Պարոնտէրի 1629 թուականով մէկ ինքգիր յիշատակարանը։

ՂՈՒԿԱՍ (մհս.) ՄԱՀՏԵՍԵԱՆՑ, ՄԵԾ-ՍԱԼԱՑԻ.— 1907 ին Ս. Յակոբի վանքին Մատենադարանին ի նպաստ, Ս. Հրեշտակապետի հարաւակողմը, 1324 բուբլիով երկու կրպակներ շինել տուած է հասոյթները յատկացնելու համար իր նպատակին. (Արձագր. Տն. Ժող. 1907, էջ 287)։

ՂՈՒԿԱՍ ԵՒ ՄԱՅՐԸ ԹԱԳՈՒՀԻ ՄՀՏ. ԳԷՈՐԳ ՍԱՐԱՖԵԱՆ, ԱՊՈՒԶԷԹՑԻ.— 1756 ին Ս. Յակոբի վանքին կը նուիրեն մէկ արծաթեայ կանթեղ ի յիշատակ ննջեցելոց։ (Ցուց. պ.)։

ՂՈՒԿԱՍ ՎՐԴ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, ԶՄՇԿԱԾԱԳՑԻ.—Մբ. Աչկ-